ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ М. НАЛБАНДЯНА
M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF SHIRAK
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ SCIENTIFIC PROCEEDINGS

Պրակ Բ
Выпуск Б
Issue B

2021

№ 1

ՀՏԴ 93/94

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

DOI 10.54151/27382559-2021.1b-74

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Գասպարյան Ա. Ա., Գազազյան Գ. Ն.

Արդի ժամանակաշրջանում խիստ կարևորվում է հայ-քրդական հարաբերությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը: Հայերը և քրդերը դարեր շարունակ ապրել են կողք կողքի և շփվել որպես հարևան ժողովուրդներ: Այդ առնչությունները եղել են տարաբնույթ՝ իրենց մեջ ներառելով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ոլորտները:

Բարդ ու հակասական է եղել հայ և քուրդ ժողովուրդների անցած պատմական ուղին: XIX դարի վերջին և XX դարի սկզբին քրդական շարժումները, որոնք թեև առանձին վայրերում հանդես եկան հայկական շարժումների հետ միահյուսված, այնուամենայնիվ չհանգեցրին հայ ազգային-ազատագրական շարժման հետ ձուլվելուն:

Այս բոլորով հանդերձ՝ պատմության տրամաբանությունը հուշում է, որ քուրդ ժողովուրդը վաղ թե ուշ ստեղծելու է իր սեփական ազգային պետությունը: Հետևաբար տեսանելի կամ հեռավոր ապագայում հայ ու քուրդ ժողովուրդների ճակատագրերը, որպես տարածաշրջանային անմիջական հարևաններ, կրկին անխուսափելիորեն բախվելու են:

Քրդական գործոնի դերը մասնավորապես Հայկական հարցում ունեցավ խիստ բացասական հետևանքներ: Այս գործոնը տիպաբանորեն պատկանում է Հայոց ցեղասպանության իրականացման առանցքային հարցերին: Հետևաբար քրդերի հակահայկական գործողությունները համարվում են Օսմանյան կայսրության քաղաքականությունից բխող հետևանք:

Բանալի բառեր. հայ-քրդական հարաբերություններ, Օսմանյան կայսրություն, Արևմտյան Հայաստան, քրդական հարց, քրդական գործոն, քրդական սփյուռք, Քրդստան, Հայկական հարց, երիտթուրքական կառավարություն, ազատագրական շարժումներ:

Նախաբան: Հիմնախնդրի ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական, քաղաքական ու ճանաչողական մեծ նշանակություն: Հոդվածը շարադրված է տարաբնույթ ուսումնասիրությունների և թեմային վերաբերող գրականության համադիր քննության, ներկայացված փաստերի պատմաքննական ու պատմահամեմատական վերլուծության սկզբունքի կիրառմամբ:

Մեր օրերում քրդական հարցը շարունակում է պահպանել իր հրատապությունը և արդիականությունը:

Հայ-քրդական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը հայ պատմագրությունից պահանջել ու պահանջում է ավելի մեծ ջանքեր ու ուշադրություն: Հայ-քրդական հարաբերությունները մենք փորձել ենք դիտարկել պատմական հստակ ժամանակահատվածում, ինչպես նաև փաստերի ու վկայությունների հիման վրա ներկայացնել որոշակի օրինաչափություններ՝ կատարելով համապատասխան ընդհանրացումներ: Արդի ժամանակաշրջանում խիստ կարևորվում է քրդական գործոնի դերը Մերձավոր Արևելքում զարգացող իրադարձությունների հետևանքով: Տարածաշրջանային գործընթացները և քրդական պետականության կայացման գործուն քայլերը սպառնում են փոփոխել մոտ մեկ դար առաջ հաստատված սահմանները:

Թեմայի համակողմանի ու ամբողջական լուսաբանման տեսակետից մեթոդաբանական իմաստով հոդվածում կարևորվում է հիմնահարցի համալիր մոտեցումը պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ: Կարևորություն է տրվում այն աշխատությունների համակցությանը, որոնց միջոցով պատմական դեպքերի գնահատականը դառնում է ավելի հավաստի և անկողմնակալ [14, էջ 14]:

Այս առումով հատկապես գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում քուրդ պատմաբանների դիրքորոշումը, որոնք ձգտում են մնալ գիտականության հողի վրա՝ չխուսափելով քրդական պատասխանատվությունից [31, էջ 2/6]: Դրանց մեջ առանձնանում է պրոֆեսոր Քամալ Մազհար Ահմադը, որ, ի տարբերություն քուրդ մյուս հեղինակների, ճշմարտացիորեն ներկայացնում է հայ-քրդական հարաբերությունների բնույթը՝ խստորեն քննադատելով այն քուրդ ցեղապետերին, որոնք մասնակցել են հայկական կոտորածներին ու Հայոց ցեղասպանությանը [31, էջ 2/7]:

Տրամագծորեն հակառակ են թուրքական պատմագրության մոտեցումները: Թուրք հեղինակները, իրենց երկերում ներկայացնելով Թուրքիայի ներքին ու արտաքին դրությունը, միաժամանակ հետաքրքիր

տեղեկություններ են հաղորդում հայ և հարևան ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացության վերաբերյալ [7, էջ 5]։

17-րդ դարի թուրք աշխարհագրագետ Էվլիյա Չելեբին Վանը, Դիարբեքիրը, Էրզրումը, Բիթլիսը և հայկական մյուս բնակավայրերը անվանում է «Քրդստան»։ Վերջինս գրում է. «Սա հայերի երկրի մի մասն է, սակայն պատկանում է Քրդստան վիլայեթին» [8, էջ 25]։

Քրդագիտության ոլորտում բավականին ընգրկուն ու արժեքավոր աշխատություններ է հրատարակել արևելագետ, պատմաբան, դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը։

Նշանավոր դիվանագետ-պատմաբանը հանգում է այն հետևության, որ հայ ու քուրդ ժողովուրդների մեջ թշնամանքի սերմանումը դառնալու է օսմանյան պետության ասիական քաղաքականության հիմնաքարը [2, էջ 125]։

Հայ-քրդական հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում անուրանալի են նաև արևելագետ, միջազգայնագետ, արաբագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունները։ Ծանրակշիռ գիտական մենագրություններում հիմնարար կերպով անդրադառնում է այնպիսի հիմնահարցերի ուսումնասիրությանը և արծարծմանը, ինչպիսիք են հայ-քրդական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները, հայ-քրդական համագործակցության նոր մոտեցումները հայկական հայեցակարգում և, որ ամենակարևորն է, մատնանշում է հայ-քրդական համագործակցության արդի միտումները։

Հայ-քրդական հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից անգնահատելի են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Պողոսյանի աշխատությունները, որոնք համակողմանիորեն մեկնաբանում են հայ-քրդական հարաբերությունները՝ կարևորելով Հայկական հարցը և երկու ժողովուրդների համատեղ պայքարի անհրաժեշտությունը։

Հայ-քրդական փոխհարաբերությունների հիմնահարցը գտնվել է նաև հայ հասարակական-քաղաքական մտքի ուշադրության կենտրոնում [25, էջ 34-35]։

Պատմագրության մեջ առանձնացվում են հայերին ու քրդերին բաժանող և մերձեցնող գործոնները։ Քրդական գործոնի դերը, մասնավորապես Հայկական հարցում, պետք է դիտարկել թուրքական

քաղաքականության համատեքստում, որն իրականացվեց Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում [14, էջ 31-32]։

Ն. Ադոնցը, խոսելով քրդերի Հայաստան ներթափանցման մասին, գրում է. «Քրդերը Հայաստանում գոյություն չեն ունեցել անհիշելի ժամանակներից։ Նրանց առաջին անգամ հայտնվելը Հայաստանի բարձրավանդակում պատմությունը լավ է հիշում» [1, էջ 96]։

«Երբ հայերը 1828 էն սկսեալ զանազան պատճառներով լքեցին իրենց հողերը եւ գաղթեցին ուրիշ վայրեր, հարաւէն քիւրտ թափառաշրջիկ բազմաթիւ ընտանիքներ եկան գրաւեցին անոնց տեղը. իրենց թիւը սկսաւ արագօրէն աճիլ եւ շուտով հասաւ 60-70.000ի» [19, էջ 23]։

Կ. Սասունին ամբողջացնում է. «Քրդերի մոտ եղած «ծայրահեղ» անկախության զգացումը դարերու ընթացքին քաղաքական ձև չէ ստացած, և քյուրտերը չեն մղված ազգային պետություն մը կերտելու և հավաքական հայրենիքի մեջ փնտրելու իրենց ապահովությունն ու անկախությունը» [21, էջ 68]։ Տևական մի ժամանակաշրջան՝ մինչև XX դարը, այդ ժողովրդի մոտ մթագնված էր ազգային միասնության ու ընդհանրության գիտակցությունը [2, էջ 7]։ Այս հանգամանքը շատ կարևոր է հայ-քրդական հարաբերությունները և դրանց բնույթը հստակեցնելու համար։ Պատմության ընթացքում քրդերն իրենց գոյությունը պահպանել են տարբեր երկրների, մասնավորապես Սիրիայի, Իրաքի, Իրանի, Թուրքիայի և այլ երկրների կազմում՝ մնալով «Մերձավոր Արևելքի բաժանված ժողովուրդ» [14 ,էջ 8]։

Խոսելով քննարկվող ժամանակաշրջանի հայ-քրդական հարաբերությունների մասին՝ պետք է նկատի ունենալ այն ծանր ժամանակաշրջանը, որը հաջորդում է նկարագրվող իրադարձությունների ճգնաժամային շրջանին [32, էջ 11-12]։

Թուրքիան ձգտում էր քրդական տարրի օգնությամբ հայ ազատագրական շարժմանը ստեղծել հակակշիռ ուժ և երկու ժողովուրդների քաղաքական ձգտումները հակադրելով միմյանց՝ կանխել նրանցից սպասվող վտանգը և խափանել նրանց ազգային պետություններ ունենալու երազանքը [33, էջ 1-3]։

Հանրապետական Թուրքիան նույնպես շարունակեց ազգային հարցի ոլորտում Օսմանյան կայսրության ավանդույթները։ Թուրք ազգայնականները քրդական հարցի կապակցությամբ անթաքույց որդեգրեցին ժխտողականությունը և անհանդուրժողականությունը [3, էջ 103]։

Խրիմյան Հայրիկը նույնպես կապեր էր հաստատում քուրդ բեկերի ու աղաների հետ, աշխատում էր նրանց համոզել, որ թողնեն վաչկատուն կենցաղը, հրաժարվեն սրից ու հրացանից ու կապվեն հողին: Նա խոստանում էր քրդական գյուղերում դպրոցներ բացել, հայ ուսուցիչներ ուղարկել, ստեղծել քրդական այբուբեն, մի խոսքով, քուրդ ժողովրդի զարգացումը դնել նոր հիմքերի վրա [3, էջ 104]: Հայրենասեր հոգևորականը համոզված էր, որ միայն այս եղանակով է հնարավոր լուծել հայ-քրդական հարաբերությունների թնջուկը: Անշուշտ, նման ծրագրերի իրականացումը անհնար էր Օսմանյան կայսրության վարած հակահայկական քաղաքականության ոլորտում, և դա շատ լավ գիտակցում էր նաև Խրիմյան Հայրիկը:

«Բայց հայ եւ քիւրտ հոգեւոր պետերու այդ բարեկամական ցանկությունները, ինչպէս եւ հայ կուսակցութեանց ու քիւրտ բէկերու մերձեցման փորձերը մասնակի երեւոյթներ էին» [18, էջ 91]:

Հայ-քրդական հարաբերությունները թևակոխեցին զարգացման մի նոր փուլ՝ պայմանավորված հայդուկային շարժման վերելքով, քանզի վերջիններս մեծ հեղինակություն էին վայելում քրդական շրջաններում [20, էջ 231-233]: Հաշտեցման աշխատանքներ իրականացվեցին Հայաստանի տարբեր վայրերում, սակայն ապարդյուն [26, էջ 212]:

Սուլթան Աբդուլ Համիդի (1876-1909) օրոք է սկիզբ առել հայկական կոտորածները; Նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ Հայկական հարցի «լուծմանը»՝ հայ ժողովրդին զանգվածաբար բնաջնջելու նպատակով [4, էջ 555]: Աբդուլ Համիդի կառավարման տարիները բնութագրվում են հատկապես ոչ թուրք ազգերի ու ժողովուրդների հանդեպ հալածանքների սաստկացմամբ [23, էջ 44]:

Այդ նպատակով վերջիններս ձգտում էին քրդական ջոկատներն ուղղել հայկական այն գյուղերի դեմ, որոնք աջակցել էին ռուսական ուժերին: Նույնիսկ եղան քրդեր, որոնք չմասնակցեցին այդ կոտորածներին, ավելին՝ նրանք հարձակվում էին թուրքական ռազմական ու վարչական մարմինների վրա՝ մեծ վնասներ պատճառելով նրանց [2, էջ 114]:

Քրդերի ու հայերի համատեղ գործողությունները երիտթուրքական կառավարությունը դիտում էր որպես լուրջ խոչընդոտ իր հայաջինջ քաղաքականությունն իրականացնելու ճանապարհին [22, էջ 83]:

Թուրքերը իրենց ասիական տիրույթները պահպանելու համար չէին խնայում ոչինչ և եկել էին այն համոզման, որ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության կազմում պահելու հարցը ներքին

քաղաքականության առանցքային ու հրատապ հարցերից մեկն է [29, էջ 6]:

Նրանք աշխատում էին համոզել քրդերին, որ հայերը նրանց թշնամիներն են, որովհետև ցանկանում են եվրոպական տերությունների օգնությամբ ինքնուրույն պետություն ստեղծել, Քրդստանը դարձնել Հայաստան ու քրդերին իրենց ենթարկել [15, էջ 84]:

19-րդ դարում Հայաստանը Քրդստան անվանելու քաղաքակա-նությունը Օսմանյան կայսրությունում ամրագրվում է պաշտոնապես: Որպեսզի Արևմտյան Հայաստանում հայերը մեծամասնություն չկազմեն, օսմանյան կառավարությունը 1867թ. Վանը, Դիարբեքիրը, Մուշը, Բիթլիսը, Հաքյարին ու Ջեզիրեն միավորեց մեկ վարչական միավորի մեջ և անվանեց Քրդստան: Նոր վիլայեթը, սակայն, կարճ կյանք ունեցավ [17, էջ 19]:

Փաստորեն այսուհետ թուրքերը Քրդստան ասելով սկսեցին հասկանալ ոչ միայն Դիարբեքիրի մի մասը և Մոսուլը, այլև Տավրոսից հյուսիս ընկած տարածքները [17, էջ 21]:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: 1878թ. փետրվարի 19-ին ստորագրված Սան-Ստեֆանոյի պայմանագրում արծարծվեց նաև հայ հասարա-կական-քաղաքական կյանքի հիմնական բովանդակություն կազմող Հայկական հարցը, որն էլ ներառվեց միջազգային դիվանագիտության ոլորտ [27, էջ 65]: Պայմանագրի 16-րդ հոդվածը նոր հույսեր արթնացրեց արմտահայության շրջաններում: Այդ հոդվածում շոշափվում էր նաև *քրդերի հարստահարություններից արևմտահայերի անվտանգությունն ապահովելու խնդիրը* [10, էջ 92]:

Հայկական հարցը թուրքական տարբերակով լուծելու ոլորտում թուրքական իշխանությունները լայնորեն օգտագործեցին քրդական վերնախավին ու ցեղերին՝ նրանց զինելով հայերի դեմ:

Նրանք, իհարկե, շատ լավ հասկանում էին, որ թուրքական վտանգին դիմագրավելու միակ ճանապարհը քրդերի ու հայերի միավորումն է, հակառակ դեպքում երկու ժողովուրդներին սպառնում էր թուրքական զոհը դառնալու վտանգը [5, էջ 212]:

Այսուհանդերձ հայ գործիչները ձեռնամուխ եղան եռանդուն լուսավորչական գործունեության և մի շարք շրջաններում անգամ բացեցին դպրոցներ քուրդ երեխաների ուսուցման համար [2, էջ 142]:

Այնուամենայնիվ հայ իրականության մեջ կային մարդիկ, որոնք գտնում էին, որ նման եղանակով շարժվելն անհուսալի ու անհեռանկար

մարտավարություն է, և քրդին միայն պետք է պատժել: Կար նաև տեսակետ, որ անհրաժեշտ է քրդերի շրջանում քրիստոնեություն տարածել [2, էջ 143]: *Եղան նաև հայ գործիչներ, որոնք, անմիջակա-նորեն շփման մեջ մտնելով քրդերի հետ, աշխատում էին ինչ-որ չափով մեղմացնել հայ-քրդական լարված հարաբերությունները* [21, էջ 266]:

XX *դարի սկզբին կովկասյան ու պոլսահայ մամուլում հաճախ կիրառվում է «Հայկական հարցը քրդական հարց է»* եզրույթը [14, էջ 53]: XIX դարի վերջին և XX դարի սկզբին քրդերի դիրքերն Արևմտյան Հայաստանում այնքան էին ամրապնդվել, որ առանց քրդերի համաձայնության այստեղ որևէ փոփոխություն հնարավոր չէր իրականացնել: Քրդերը հենց այնպես չէին զիջելու իրենց դիրքերը, և առաջ քաշվեց այն վարկածը, որ Հայկական հարցի լուծումը կախված է և կապված է քրդական հարցի լուծումից: Հայերի կամ Հայկական հարցը լուծելու համար նախևառաջ անհրաժեշտ է լուծել քրդերի հարցը՝ վերջիններիս պահանջները բավարարելու իմաստով [14, էջ 54]:

Քրդական շարժումները մշտապես վնաս են հասցրել հայ աշխատավորությանը [9, էջ 307-308]:

Պետք է արձանագրել, որ հայ-քրդական հանգույցի լուծման հարցում արդյունքները գոհացուցիչ չեն եղել կամ եղել են շատ չնչին:

Հայերը նախապատրաստվում էին դիմագրավելու գալիք մեծ փորձություններին և ուղիներ էին փնտրում դրանք մեղմելու համար: Եթե XIX *դարի երկրորդ կեսին հայերի առաջ կանգնած էր քրդերի հետ դաշինք ստեղծելու խնդիրը, ապա այժմ առաջ էր քաշվում սուլթանական բռնակալության դեմ կայսրության բոլոր ժողովուրդների հետ ակտիվորեն համագործակցելու հարցը* [24, էջ 157]:

Թուրքական իշխանություններն առիթը բաց չէին թողնում հայերին հավաստիացնելու, որ պատրաստ են խստորեն պատժել այն քրդերին, որոնք ոտնձգություններ կկատարեն հայերի իրավունքների դեմ [16, էջ147]:

Գործնականում օսմանյան կառավարությունն ամեն ինչ անում էր՝ քրդերի ձեռքով հայերի հետ հաշվեհարդար տեսնելու, Հայկական հարցն այդ ճանապարհով լուծելու համար [28, էջ 39]:

1908թ. նոյեմբերի 2-ին բացված թուրքական մեջլիսի 230 տեղերից հայերն ունեին 10 տեղ, որը բնականաբար չէր արտահայտում հայերի թվի հարաբերակցությունը Օսմանյան կայսրության մյուս ազգութ-յունների թվի հետ, իսկ քրդերն ունեին ընդամենը երկու տեղ [11, էջ 261]:

Թուրքական մեջլիսում հայ ու քուրդ պատգամավորները մի շարք հարցերում պաշտպանում էին ընդհանուր տեսակետներ [22, էջ 83]:

Փաստորեն քրդերի այն կանխատեսումը, որ երիտթուրքերը կսահմանափակեն իրենց իրավունքները, արդարացան: Ավելին՝ երիտթուրքերը քուրդ հողատերերից վերցրին հայերից խլված հողերը ու տվեցին նախկին տերերին: Երիտթուրքական խորհրդարանը ընդունեց օրենք ոչ մահմեդականների զինակոչման մասին, ըստ որի՝ հայերը իրավունք են ստանում ծառայել Օսմանյան բանակում: Դա վերջնականապես զայրացրեց քրդական ավագանուն:

Իրավիճակը փոքր-ինչ փոխվեց, երբ հայ-քաղաքական ուժերը հեռացան երիտթուրքերից, ու նոր հեռանկարներ բացվեցին հայ-քրդական հարաբերությունների զարգացման ուղղությամբ [25, էջ 39]:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին արդեն պարզ դարձավ, որ հայ ժողովուրդը սատարում է ռուսական զենքի հաղթանակին: Ռուսական պետական քաղաքականությունն իր որոշակի նպատակաուղղվածությամբ նպաստում էր Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու ընդհանուր մտայնության ու պատրաստակամության խորացմանը [12, էջ 59]:

Պատերազմը նոր փորձությունների ենթարկեց հայ-քրդական հարաբերությունների զարգացման ընթացքը: Երիտթուրք պարագլուխ-ները հիանալի գիտակցում էին, որ Հայկական հարցի տրամաբանական լուծումը կարող է հանգեցնել Հայաստանի անկախությանը: Անգամ նրանք պատրաստ էին հաշտվել ընդարձակ ու հարուստ արաբական հողերի կորստի հետ, բայց ոչ երբեք Հայաստանի, քանի որ այն ընկած էր Մեծ Թուրան տանող ճանապարհի վրա, որը թուրք ազգի համար կենսական նշանակություն ուներ [2, էջ 221]: Այս խոչընդոտը վերացնելու նպատակով Օսմանյան կայսրությունը մշակեց երկրի հայ ազգաբնակ-չության ցեղասպանության և նրա բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի հայաթափման ծրագիր, որն էլ իրականացվեց պատերազմի տարիներին [6, էջ 12-13]:

Երիտթուրքական կառավարությունը որոշեց լայնորեն օգտագործել քրդերի ռազմական ուժը ինչպես մարտական գործողություններում, այնպես էլ ներքաղաքական կյանքում: [2, էջ 223]:

Ավելի հաճախակի էին դառնում այն դեպքերը, երբ հայ ու քուրդ գյուղացիությունը համատեղ էր հանդես գալիս իրենց հարստահարող ու կողոպտող բեկերի ու աղաների դեմ: 1907թ. հայ գյուղացիները 48 ժամ շարունակ Վանի վիլայեթում, Շատախի շրջանում կռվում էին քուրդ

ավազակների դեմ, որոնք խլել էին քուրդ գյուղացիների անասունները: Համատեղ ջանքերով՝ գողացված անասունները վերադարձվեցին իրենց տերերին [3 , էջ 245]:

Նախապատերազմյան տարիներին Ռուսաստանը փորձում էր սիրաշահել քրդերին, սակայն պատերազմի սկզբում համոզվելով, որ քրդերը անվերապահորեն աջակցում են թուրքերին, կտրուկ փոխեց իր դիրքորոշումը, և ռազմական գործողությունների ժամանակ ավերում էին անգամ քրդական գյուղերն ու բնակավայրերը [2, էջ 225]:

Փաստորեն քրդերի շրջանում գտնվեցին հավաքականություններ, որոնք ոչ միայն չմասնակցեցին հայկական կոտորածներին, այլև ապաստան տվեցին հայերին [21, էջ 218]: *Բազմաթիվ ցեղապետեր ենթարկվել են թուրքական հալածանքների միայն նրա համար, որ հայերին վերցրել են իրենց պաշտպանության տակ ու նրանց չհայտնաբերելու համար պահել են քրդական տարազով* [30, էջ 23]:

Անտեսել ու հաշվի չառնել այս փաստը, նշանակում է հայ-քրդական հարաբերությունների պատմությունը լուսաբանել միակողմանիորեն [2, էջ 164]: *Անգամ 1890-ական թվականների կոտորածներից հետո քուրդ շատ գործիչներ հասկացել են, որ թուրքական կառավարությունը սպառնում է նաև քրդերին, և որ իրենք շեղվում են իրենց ազգային խնդրից՝ թուրքական լծի դեմ պայքարից:*

Քրդական գործոնը օգնեց թուրքերին վերջնականապես «լուծել» Հայկական հարցը, առանց որի դա անհնար էր: «Կասկածե դուրս է, որ եթե քրդական օժանդակությունը չըլլար, թուրքերը շատ մեծ դժվարության պիտի մատնվեին հայերուն դեմ իրենց ձեռնարկներուն մեջ» [21, էջ 222]:

Դա միանգամայն բնական էր: Արևմտյան Հայաստանը նվաճված էր թուրքերի կողմից, 1,5 միլիոն հայ բնակչությունը կոտորված էր, իսկ կենդանի մնացածները դեգերում էին արաբական կիզիչ անապատներում, հանգչում Դեր-Զորի ավազուտներում [13, էջ 95]:

Ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական էթնիկական տարրը ձեռք բերեց գերակշիռ դիրք ու կազմեց մեծամասնություն: Կարծես թե իրականանում էր երիտթուրքերի կողմից քրդերին խոստացված ինքնավար Քրդստան ստեղծելու ծրագիրը: Սակայն ընդհակառակը, երիտթուրքերի համար օրակարգի անհետաձգելի հարց դարձավ «քրդական պրոբլեմի» լուծումը:

Այժմ եկել է ժամանակը, որպեսզի քրդերը դասեր քաղեն պատմությունից [34, էջ 1/6]:

Այսօր Թուրքիայում ապրող հետազոտողներ Աղնան Չելիքը և Նամք Քեմալ Դինչը գրի են առել Դիարբեքիրի քուրդ բնակչության բանավոր հիշողությունները Հայոց ցեղասպանության մասին, որոնք անվանել են «Հարյուրամյա ցավ. հանրային հիշողության հետքերը 1915թ. Դիարբեքիրում»: Գրքում խոսվում է հայ-քրդական բարեկամական կապերի, ավանդույթների, կենցաղի մշակույթի, հայ-քրդական բախումների և Հայոց ցեղասպանության վերապրումների մասին:

Այս ամենը խոսուն փաստեր են հայ-քրդական հարաբերությունների զարգացման ընդհանուր պատկերը ամբողջացնելու տեսանկյունից [35, էջ 2/6]:

Եզրահանգում: Բարդ ու հակասական է եղել հայ և քուրդ ժողովուրդների անցած պատմական ուղին: Նրանք կանգնած են եղել ու այսօր էլ շարունակում են կանգնած մնալ լուրջ մարտահրավերների առջև: Նրանք պարտավոր են հաշվի առնել ու դասեր քաղել իրենց պատմությունից, վերագնահատեն անցյալը և հաստատակամորեն շարժվեն դեպի ապագան: Քրդերի պայքարը հանուն իրենց ինքնության պահպանման, քաղաքական ու մարդկային իրավունքների ձեռք բերման դեռ շարունակվում է: Անկասկած է, որ մեր օրերում քրդական գործոնը հանդիսանում է Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի խաղաղության ու կայունության կարևորագույն բաղադրիչներից մեկը [2, էջ 365]:

Անցյալի և ներկայի ճակատագրերով միմյանց հետ կապված երկու հարևան ժողովուրդները պետք է պատրաստ լինեն դրան, որպեսզի չկրկնվեն անցյալի ցավալի սխալները:

Ցավոք, քուրդ ժողովուրդը շարունակեց խաղալ այն դերը, որ նրան բաժին էր հանել օսմանյան կառավարությունը: Դա էր, որ քրդերին պետք է մեղսակից դարձներ Մեծ Եղեռնին: Քրդերը գնացին պատմական մի ուղիով, որի ողբերգական լինելը կանխագուշակում էին ոչ միայն հայերը, այլև քուրդ առաջադեմ խավերը: Հետո եկավ քրդերի հերթը:

Եզրահանգումները կատարված են փաստական նյութերի հետազոտության հիման վրա:

АРМЯНО-КУРДСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ АРМЯНСКОГО ВОПРОСА (КОНЕЦ XIX ВЕКА - НАЧАЛО XX ВЕКА)

Гаспарян А. А., Газазян Г. Н.

В настоящее время крайне важна необходимость изучения истории армяно-курдских отношений.

Армяне и курды на протяжении веков жили бок о бок и общались как соседние народы. Эти контакты были разнообразными, вовлекая в себя как политическую, так и экономическую сферы.

В то же время сложная и противоречива историческая судьба двух соседних народов. В конце XIX и начале XX веков курдские движения, которые, хотя в отдельных местах выступили переплетенными с армянскими движениями, тем не менее, не способствовали формированию альянса двух народов.

Тем не менее, логика истории подсказывает, что курдский народ рано или поздно создаст свое собственное национальное государство. Следовательно, в обозримом или дальнем будущем судьбы армянского и курдского народов, как непосредственных соседей региона, вновь неизбежно столкнутся друг с другом.

Роль курдского фактора, в частности, в армянском вопросе, оказала крайне негативное влияние. Этот фактор типично относится к ключевым вопросам осуществления геноцида армян. Следовательно, антиармянские действия курдов рассматриваются как следствие, исходящее из политики Османской империи.

Ключевые слова: армяно-курдские отношения, Османская империя, Западная Армения, курдский вопрос, курдский фактор, курдская диаспора, Курдистан, Армянский вопрос, младотурецкое правительство, национально-освободительные движения.

ARMENIAN- KURDISH RELATIONS IN THE CONTEXT OF ARMENIAN QUESTION (END OF XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY)

Gasparyan A. A., Gazazyan G. N.

In modern times there is a necessity to study the history of relations between Armenians and Kurds.Armenians and Kurds have lived side by side for many centuries and they have communicated as neighbor countries. The communication has been of various types, including both political and economic spheres.

Meanwhile, the historic destiny of these two neighbor countries was complex and contradictory. At the end of IX and at the beginning of XX centuries Kurdish movements co-acted with Armenian forces in some places, nevertheless they did not contribute to the formation of alliance.

Nonetheless, the historical logics prompts that sooner or later the Kurdish people will have their own national country. Thus, in the future, the destinies of two neighbor countries will unavoidably collide.

The Kurdish factor had a negative influence especially in the Armenian question. This factor typologically belongs to the main questions of realizing Armenian genocide. Consequently, the anti-Armenian actions done by Kurds are observed as the result of the policy of The Ottoman Empire.

Keywords: Armenian-Kurdis Relations, Ottoman Empire, Western Armenia, Kurdish Ouestion,Kurdish factor, Kurdish Diaspora, Kurdistan, Armenian Question, Young Turks government, national liberation movements.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Ն. Գ. Հայկական հարցի լուծման շուրջ: Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն:1989: 116 էջ:
2. Բայբուրդյան Վ. Ա. Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո: Երևան: Հեղինակային հրատարակություն: 2008: 420 էջ:
3. Բայբուրդյան Վ. Ա. Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1989: 358 էջ:
4. Բայբուրդյան Վ. Ա. Օսմանյան կայսրության պատմություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 2011: 718 էջ:
5. Գանգրունի Հ. Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ: Բեյրութ: Համազգային տպարան 1973: 212 էջ:
6. Թուրքիայի Հանրապետության պատմություն: Խմբ. Ռ. Սաֆրաստյան: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 2014: 396 էջ:
7. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին: Կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան: Երևան: Հատոր Բ.: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1964: 338 էջ:
8. Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքական աղբյուրներ: Հատոր Գ., Էվլիյա Չելեբի: Կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1967: 345 էջ:
9. Լեո Երկերի ժողովածու: Երրորդ հատոր: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1969: 512 էջ:
10. Կիրակոսյան Ջ. Ս. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը /19դ. 80-ական թթ./: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1980: 456 էջ:

11. Կիրակոսյան Ջ. Ս. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: Գիրք առաջին: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1982: 360 էջ:
12. Կիրակոսյան Ջ. Ս. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: Գիրք երկրորդ: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1983: 464 էջ:
13. Հարությունյան Ա. Հ. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1984: 356 էջ:
14. Հովհաննիսյան Ն. Հ. Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում: Երևան: Հրատարակություն Ռամկավար Ազատական Կուսակցության: 2016: 84 էջ:
15. Մարկոսյան Ս. Ս. Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1968: 336 էջ:
16. Պողոսյան Ս. Կ. Գոյատևման պայքարի քառուղիներում: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1989: 480 էջ:
17. Պողոսյան Ս. Կ. Քրդերը և Հայկական հարցը: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1991: 456 էջ:
18. Ռուբէն Հայ յեղափոխականի մը յիշատակները: Բ. հատոր: Երևան: «Ադանա»: 1990: 326էջ:
19. Ռուբէն. Հայ յեղափոխականի մը յիշատակները: Գ. հատոր: Երևան: «Ադանա»: 1990: 373 էջ:
20. Ռուբէն. Հայ յեղափոխականի մը յիշատակները: Դ. հատոր: Երևան: «Ադանա»: 1990: 411 էջ:
21. Սասունի Կ. Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները: /ժե դարեն մինչև մեր օրերը/: Պեյրութ: Համազգային տպարան: 1969: 331 էջ:
22. Սարգսյան Ե. Ղ. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1964: 597 էջ:
23. Սիմոնյան Հ. Ռ. Թուրք-հայկական հարաբերությունների պատ-մությունից: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1991: 630 էջ:
24. Սիմոնյան Հ. Ռ. Թուրք ազգային բուժուազիայի գաղափարաբա-նությունը և քաղաքականությունը: Երևան: 1986: «Հայաստան» հրատարակչություն: 1986: 564 էջ:

25. Ստեփանյան Խ. Ռ. Հայ-քրդական հարաբերությունները Ռ. Տեր-Մինասյանի դիտարկումներում: «Էջմիածին» պաշտօնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: Ս: Էջմիածին: 2012: Մայիս: էջ 34-44 :
26. Վարանդեան Մ. Հ. Յ.Դաշնակցութեան պատմութիին: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1992: 536 էջ:
27. Վարդանյան Հ. Գ. Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դ. վերջին քառորդում: Երևան: ՀՍԳԱ հրատարակչություն: 1967: 357 էջ:
28. Инджикян О. Г. Буржуазия Османской империи. Изд-во АН Арм. ССР, 1977. 314 с.
29. Кишмишев С. О. Война въ Турецкой Арменіи 1877-1878 г.г. Издательство: Военная типография. СПб. 1884. 536 с.
30. Чатоев Х. М. Курды Советской (1920-1940) Армении Ист. очерк. Ереван. Изд-во Акад. наук Арм. ССР 1965. 154 с.
31. Ազգ. 036 2015-10-02 ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ: AZG ..Նիկոլայ Հովհաննիսյան,Պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Գիտության վաստակավոր գործիչ: Քուրդ պատմաբանը քուրդ-հայկական հարաբերությունների բարդ հանգույցի եւ քրդերի Հայոց ցեղասպանությանը մասնակցելու դրդապատ-ճառների մասին: https://www.azg.am/AM/2015100216 (5.04.2021):
32. Դրօշակ 1903, N 5, Ժնև. մայիս, էջ 69-70 17 էջ historyofarmenia.am.am http://www.historyofarmenia-am.armin.am (7.04.2021):
33. Հնչակ 1903, յունուար, N 1, էջ 1-3 և էջ 17 grahavak.blogspot.com (7.04.2021):
34. Քրդերը Ցեղասպանության գործում. պետության գործի՞ք, թե՞ շահող կողմ: https://www.civilnet.am› news (7.04 . 2021):
35. Ի՛նչ են պատմում Դիարբեքիրի քրդերը Հայոց ցեղասպանության մասին: https://www.civilnet.am › news / (7.04.2021):

Տեղեկություններ հեղինակների մասին

Գասպարյան Ա. Ա. *– պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*
Շիրակի պետական համալսարան
էլ. փոստ՝ ArshavirGasparyan@mail.ru

Գազազյան Գ. Ն.
Արմավիրի մարզի «Ծիածանի միջնակարգ դպրոց»
էլ. փոստ՝ ciacan@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 15.04.2021
Գրախոսվել է՝ 20.04.2021